

ԳՐԱԿԱՆԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

Ա. Ղ. Օ. Թ. Բ.

I.

Ողջոյն հայրենիք, ողջոյն ըուրաստան,
Ո՛վ դու բերկրալի երկիր եղեման,
Ահա եկել է քո պանդուխտ որդին,
Ծուրրում է քեզ իր կեանքն ու հոգին:
Բայց, աւանդ, ինչո՞ւ այս ուրախ ժամում
Միայն տխրութիւն տիրեց իմ սրտում,
Եւ քո միգապատ լեռների նման
Ես էլ քարացայ, մնացի տրտում:
Սեւ սեւ ամպերը ամէն մի կողմից
Եկան, կոտուեցին դժբաղդիս գլխին...
Միտոս խաւարեց ու յանկարծ նորից
Ինձ պաշարեցին ցաւերըս հին-հին:

II.

Թշուա՜ն հայրենիք, այս ի՞նչ եմ տեսնում:
Տարիներ, դարեր սահեցին, անցան,
Բայց քո տանջանքին դեռ չեղաւ վախճան.
Ամէն տեղ հրդեհ, լաց, սու՛ւ, տառապանք,
Ամէն օր կապանք, մահ ու արքորանք—
Եւ խեղճ գիտացու վաստակը դաշտում
Մնում է՝ փտում արեան գետերում,
Իսկ նրա եզը՝ դեռ լուծը վզին՝
Դարձել է արդէն գայլերի բաժին:
Ո՛հ, ի՞նչ սոսկալի տխուր մերկութիւն,
Ի՞նչ սարսափելի կեանքի դառնութիւն:

III.

Ահա՛ յուսահատ, որբիկ գեղջկուհին
Ուսին կապելով փողբիկ մանշուկին,
Մուրացկանի պէս՝ մերկ ու վշտահար՝
Անցնում է գնում մի օտար աշխարհ...
Բայց ո՞վ կը լինի խեղճերին պաշտպան,
Ասա՛, հայրենիք, ասա՛, սիրեկան.
Եւ քո կենսատու, անոյշ ջրերից
Ժարաւ աղքատին մի բաժին կը տա՞ն...
Տխրալի օրեր, օրեր հոգեհան
Մընաց մանշուկին տանել յախտեան,
Եւ մայրը նրան մի անապատում
Պիտի օրօրէ չազարի նման:

IV.

Ո՛վ Դու երկնային արդար Դատատը,
Աղօթում եմ՝ ես՝ կանգնած գլխակոր.
Այդ խղճով որբը—իմ՝ եղբօր որդին
Յանձնուած է, Տէ՛ր, արդ .քո սուրբ կամբին.
Տես՝ անբաղդ մայրը ամայի դաշտում
Մոլորուած՝ նստած, ողջում է՝ սգում.
Իսկ նրա քաղցած ու ծարաւ որդին
Մատնուած է արդէն մահուան տագնապին...
Հին Բերսաբէի չոր անապատում՝
Հագարն էր մի օր այդպէս արտասուում,
Եւ նրա ծայնը քարձրից լսեցիր,
Իսկ այս խեղճերին ինչո՞ւ չես լսում:
Ողորմի՛ր դրանց, աղաչում եմ .քեզ.
Այդ մերկ որբերին մի՛ թողնիր անտես.
Ժազիր վերջապէս մի լոյս խնդութեան,
Պարգեւիր դրանց մի յոյս փրկութեան...
Ա. ՄԱՍԻՍԻԱՆ



ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆՑ Մ. ԿԱՂ. ԵՒ ԳԻՐԲ
ԹՂԹՈՑ ԱՆԱՆԻԱՅԻ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻ.

(Շարունակութիւն)

Ա.

Արդէն Անանիայի կաթուղիկոսի կոնդա-
կից, որը քաղուածք է Աղուանից պատմու-
թիւնից, չօրս հատուած հրատարակեցինք,
օրինակների բազմազան տարբեր ընթերցուած-
ներով: Որպէս զի հետաքրքրուողները գաղա-
փար կազմեն թէ ինչպէս 1289 թուականի
Աղուանից պատմ. հիմնական օրինակից ընդ-
րինակուելով մինչև 1829 թուականը և այս
թուականից էլ մինչև 1860-ական թուա-
կանները (Աղուանից պատմութեան տպագրու-
թեան տարին) որքան փոփոխութիւններ և կա-
մայականութիւններ են մտած բնագրի ընդ-
րինակութիւնների և տպագրութեանց մէջ,
այս մասին գաղափար կազմելու համար բա-
ւական ենք համարում հրատարակած հատ-
ուածների տարբեր ընթերցուածները ծանօ-
թութեանց մէջ. իսկ այսուհետև միայն եր-
կաթագիր օրինակի և երկրորդ խմբին պատ-
կանող օրինակների տարբեր ընթերցուածները
կը դնենք ծանօթութեան մէջ:

Անանիայի կոնդակի հետեւեալ Լ. հատուածի մասին Աղուանից պատմութեան մէջ յիշատակութիւն չկայ. թերեւ 949 թուականին զոյութիւն ունեցող Աղ. Պատմ. մէջ եղած լինի և յետոյ դուրս ձգուած ընդօրինակողներից, զիտութեամբ կամ անգիտութեամբ:

— Լ. « Լ. յետ մահուանն¹ հայոց հայրապետացն՝ յաջորդէ զաթոռ սրբոյն Գրիգորի տէր Առնիտաս յԱրագածոտանէ² և սա միապետեաց զբաժանեալ հայրապետութիւն տանս Հայոց: Սա շինեաց զվկայարան սրբոյն Հռիփսիմէի: Սա էր առաքինաջան վարուց յաւետ հետեող և յոյժ ակահաստուածային զրոց: Եւ աղաչէր զԱստուած զօր հանապաղ ի տուէ և ի զիշերի միարանել զանգամն որոշեալ (ի) սուրբ հայրենի գրկացն սրբոյն Առնաւորչին, որ էառ իսկ զպտուղ աղօթիւն: Քանզի ի սորին երրորդ ամի աթոռակալութեան վաղձանէր ապստամբ հայրապետն Աղուանից, և զոյ ասել թէ՛ հոգւոյն շնորհ իբր ի թանձրամած թմբից³ զքոյ զարթուցեալ զմիտս իշխանացն՝ ծանեան զինքեանց զփրկութիւնն և դարձեալ հաւանեալ

ինդրեցին ի փրկութեանց կաթողիկոս ի ձեռնադրութենէ որ սրբոյ Առնաւորչին աթոռակալէ՝ ի սրբոյն Առնիտասայ:

Իսկ նա իբրեւ հայր բաղմադուծ ոչ պահէր ռես և ոչ ցանդ բարկանայր, այլ վաղվաղակի ձեռնադրէր և միապետէր և յորդորէր վարդապետական բանիւք և հաստատէր ի միարանութիւն Լ. եկաց տեւեաց¹ այսպէս ուղղափառ և սուրբ կարգադրութեամբ զամս 28 (82) և զժամանակս Լ. (7) աթոռակալաց սրբոյ Առնաւորչին՝ մինչև ցՏէր Աղիա Հայոց կաթողիկոս, որ էր ԼԳ. (34) երորդ ի սրբոյն² Գրիգորէս:

Սոյն հատուածից Օրբելեանի քաղուածքն է այսպէս՝ « Իսկ ի վախճանելն Արարահամու և Յովհաննու նստի պատրիարք Հայոց Առնիտաս, վախճանի և Աղուանիցն: Այս դարձեալ հնազանդեն Աղուանք Հայոց և ինդրեն կաթողիկոս ի Առնիտասայ, որ և ձեռնադրեացն իսկ յերկրորդ ամի հայրապետութեանն իւրոյ: Եւ այսպէս կացին ի հնազանդութեան զամս 85, ի ժամանակս եօթըն կաթողիկոսաց Հայոց ի տէր Աղիա: »

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԱՒԱՆԻՑ.

ԳԻՐԳ ԹՂԹՈՑ.

— Օ. « Քանզի¹ բազում և ազգի ազգի չարութեամբ որպէս սովոր է յամենայն ժամ բարիատեաց թշնամին մեր եւ հասարակաց փրկութեան հակառակորդն սատանայ որսալ զպարզամիտս ի մարդկանէ, եւ ընդդէմ մրցեալ մանկանց եկեղեցւոյ ըստ իւրում բռնածին բարուց: հնարել եւ յընտրեալսն կամեցեալ, ըստ բանին եթէ ոսորն մեր սատանայ իբրեւ զառեւծ գոչէ եթէ զօ կլանիցէ:

« Քանզի² սովորն է հասարակաց փրկութեան հակառակորդն սատանայ որսալ զպար-

— Օ. « Այս սատանօր ակզրնաչարն սատանայ որ ի ձեռն կնոջն զաղոնապատիր և սուտակասպաս խարկանօք զերանելին կաղմած ընդվզեալ փաղաքշալուր Աստուածայոյն կարծեօք՝ զնախադոյն բաղդատական տարամերժեալ պատիւ՝ զնա տիրեսցեն¹ քեզ՝ վճառորեաց, վատթարակի առեալ զասումն երկրաւոր նզովեալ ի քոյդ սղալանս, անհեշտաբար զնա ըմբոյշինեսցես ի կատար խոցոտմունք վիրաւորիչք ընձիւղեացին քեզ՝ փոխանակ եռանգասեռն երփնեռացիկ ընդ ծաղկաւապատու-

Ժան. 1. Ա. մահո լն. Բ. մհն: 2. Բ. յարագածոտնէ: 3. Բ. թմբից:

1. Պատմ. Աղ. գիրք Գ. զԼ. Ը. (երկաթ. օր):
2. Նոյն, երկրորդ խումբ. բոլոր, օրինակ: Գիրք Գ. գլուխ Ը.

1. Բ. տեւեալ: 2. Ա. լ. որդի սրբոյն Գրիգորի: Բ. լ. ի սրբոյն:

1. Ա. Բ. պատիւզնա տիրեսցին քեզ:

զամիտս. և ընդդէմ մրցեալ³ մանկանց եկեղեցոյ ազգի ազգի չարութեամբ հնարել և ընտրեալսն⁴. ըստ բանին թէ ոստին մեր սատանայ⁵ իրրե զառիւծ գոչէ: շրջի թէ զո⁶ կկանխէ: և լին:

Այսն⁶ բախուրա⁷ ումեմն⁸ Ներսէս անուն եղեալ⁹ կաթողիկոս Աղուանից:

— Ի վաղձանելն¹⁰ Ղազարու Աղուանից կաթողիկոսի ոմն յերկարեակ աղանդոյն Քաղկեդոնի բախուր անուն: երբեմն եղեալ է պիսկոպոս դարգմանա և Ներսէս յաջորդեալ: Սա ուխտադրեալ ըստ բաժան Աղուանից տիկնոջ¹¹, կնոջ Արազ Տրդատա որ էր ի նոյն կամօք աղանդ¹² հետեւեալ: Կնքեր¹³ դաշինս վասն փառամոլ տիրոջութեանն ասելով եթէ կամ է քո կոչել¹⁴ զիս ի հայրապետութիւն Աղուանից, եւ¹⁵ արարից զամենայն Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի: Եւ ունկեղիր եղեալ նմա չարափառ կնոջն, խորհուրդ բերեալ ընդ եպիսկոպոս¹⁶ և ընդ մեծամեծս աշխարհին¹⁸ Աղուանից, եւ ոչ ոք իմացաւ զդաւաճանութիւնն:

Յանձն առին առ հասարակ կատարել զինչիրան. 1 իսկ ամենախալ² հոգին սուրբ աղբեալ եպիսկոպոսին Սեծիրեանց⁵ Յովնայ⁴ առաջի մեծախումբ ժողովոյն խնդրեաց ի Ներսիսէ ձեռնարկ նդովել զժողովն քաղկեդոնի, եւ զտոմարն⁵ Ղազար⁶ նորին մատանով: 7 Եւ ընկալեալ զնամակն ի ժողովումն արեւելից ըստ կանոնական սահմանի⁸ ընկալեալ եղև, եւ⁹ նոյն ինքն Յովնայ եպիսկոպոս հանդերձ այլ եպիսկոպոսաւք վերակոչեն զնա ի հայրապետական շնորհս սուրբ աթոռոյն Աղուանից: Եւ նոյն ժամայն Յովնայ եպիսկոպոս¹⁰ առ ինքն առեալ զնդովից գիրն¹¹ զնէր ի պահեստի: Եւ յետ այնր կեցեալ¹² ամս ԺԴ. փոխադրուր ի Քրիստոս: 15

Յայնժամ զտեալ տեղի Ներսիսի կատարել զկամս իւր իսկոյն փութա¹⁴ ի դաւառն Սեծիրեանց, եւ գործակ¹⁵ իւր զը-

թեանց¹ արքայականացն կայենիցն² փափկութեանց՝ յերկս տաժանմանց կրիցես⁵ զստեղանդ զսոստանաճարակն հարկեցիս պարենաւորել. հանդերձան դիւրաթառամն և վաղահամուռս մինչև ի ծոցաւորին քո անդէն:

Եւ ստեղծեալք ի ստեղծողէն⁴ ընկալցին զ(ը)միանմանն աղէտս, նոյն թիւնարերան իժից խղիւղութիւն:

Եւ աստանօր՝ ի վաղձանիլ հայրապետին Աղուանից շնչեաց ի տիկին մի Աղուանից աշխարհին և իրրե ի դիւական հոգւոյն բախեաց, զոյ ասել: Սիրեաց զոմն եպիսկոպոսաց աշխարհին Աղուանից և անձնիշխան⁵ կամօք՝ զունակ նախամօրն՝ սիրեաց երանել ի դրախտէն և յաստուածաստեղծ Սայինից:

Նոյնպէս և կինս այս քակեաց զիրամ սրբոյ լուսաւորչին, որ էր տեւալ ամս ՆԶԴ. (484) միով միակամութեամբ՝ ըստ կարգեցելոյ սրբոյն Ղարիբորի տալ ի նորին աթոռոյ զձեռնադրութիւն տանն Աղուանից: Եւ առեալ զայն զայն, զոր վերագոյնդ ասացաք զՆախուր, տայր հրաման եպիսկոպոսաց զնա ձեռնադրել կաթողիկոս, առանց սրբոյն Ղարիբորի աթոռակալին ձեռնադրութեանն:

Ապա յետ այսր եղելոյ՝ ջահեցաւ այրն այն բախուր, որ եղև չկաթողիկոս ներկեալ յազանդն Նեստորի⁶ քաղկեդոնի և առ սուկաւ սարդեալ եմոյծ յեկեղեցիս զտոմարն Լեոնի և հերձ զսուրբ հաւատս: Եւ բազումք զթեցան ի սուրբ ուխտէն⁷ ի տումարն Լեոնի:

Եւ իրրե զխտացին որք ուղղափառք

5. Ն. մրցել: 4. Ն. յընդդեմ: 5. Ն. սատանա: 4. Պատմ. Աղ. գիրք 9. գլ. 9. 5. երկրորդ խումբ: 6. Քաղկեդոն: 6. ՔՄ. որում: 7. Ն. եղև: 8. ՔՄ. ի վախճանել երանելոյն: 9. Ք. տիկնոջ: 10. ՔՄ. աղանդ: 11. ՔՄ. կնոջ: 12. ՔՄ. կոչեա: 13. ՔՄ. եւ աս: 14. ՔՄ. եպիսկոպոս: 15. ՔՄ. պապ:

1. ՔՄ. զնդդերն: 2. ՔՄ. ամենախալ: 3. ՔՄ. Մեծիրեանց: 4. ՔՄ. Յովնայ: 5. Ն. տոմարն: 6. ՔՄ. լեւոնի: 7. ՔՄ. մատանով: 8. ՔՄ. վերակոչել եւ զնապիր: 9. ՔՄ. ի նոյն: 10. Ք. եպիսկոպոս: 11. Ք. թողիք: 12. ՔՄ. կացեալ: 13. Ք. յաւելու, սքն. յովել: 14. ՔՄ. փութա: 15. ՔՄ. գործակից:

1. Աղ. ծաղկատուից: Ք. Ա ծաղկատուից: 2. Ք. կայենից: 3. ԱՅ. կերեցես: 5. ԱՅ. պապէս: 4. ի ստեղծողէն: 5. ԱՅ. անձն իշխան: 6. Ք. Նեստորի: 7. Ք. ուխտէն:

տեալ զԱջաբարիայ⁴⁶ վանաց հայր տայ նմա խորհուրդ առնել զնա էպիսկոպոս եւ շնորհել նմա զտեղաւորի հասն. միայն եթէ⁴⁷ տացէ զնորին ձեռնարկն զի այրեսցէ: Եւ նորա տեսեալ զսուրբ ուխտին զիրն առ նա առ եւ անդէն ի տեղն հրկիզեաց: ⁴⁸ Եւ զԱջաբարիա⁴⁹ ձեռնադրեաց էպիսկոպոս Սեծիրանց, եւ կարեւոր բարեկամութիւն զնա ընկալեալ, դարձաւ ի հին փոխուածն²⁰ զոր ի ժամանակաց սպասէր. Թիկնոջն Սպարամա²¹ զնա ստիպեալ²²: Եւ նորին աւգնութեամբ եւ այլոց նախարարաց, որոց զորումն էր ընկալեալ քակեալ²³ աւերեաց զբազում սեղանս եկեղեցեաց²⁴ որում յաղթողն եղեւ: Եւ զարժանաժառանգ մանկունս եկեղեցոյ զուղղափառս հայաժախանս²⁵ արար տարաբնակս. նախ զերանելին Իէդ. (Խարայէլ) նշանագործ էպիսկոպոս Սեծ կողմանց²⁶ հալածեաց, որ զբազում աշխարհս խազրաց եւ հոնաց դարձոյց ի քրիստոնէութիւն, ընդ [նմ]ին եւ զեղիազար²⁷ զարդմանայ էպիսկոպոս:

Իսկ ոմանք յէպիսկոպոսաց նշահանցին ի նմանէ²⁸. յովաննէս կապաղակա էպիսկոպոս Սահակ ամարասս էպիսկոպոս սիմեոն հոշաշ²⁹ էպիսկոպոս, Շերոյ մեծ իշխանն աղուանից հանդերձ իր³⁰ ազատաւքն³¹, եւ բազմութեամբ ուխտից եկեղեցւոյ զումարել³² հանդէս ժողովոյ, նզովցին զՆերսէս ընդ ամենայն հերձուածողս. բն. յաւելու. եւ զըրեցին ի հայք զանցս աղետինցն:

Եղուանից պատմութեան մէջ մանրամասն գրած է Հայոց Եղիա կաթողիկոսի Եղուանից աշխարհ գնալու, իսմայէլացւոց ուժով խռովութիւնը զաղարեցնելու, Հայոց եւ Եղուանից միաբանական ձեռնարկ հաստատելու անցքերը: Սոյն հատուածից Օրբելեանի քաղուածքն է՝ «Եպս յաւուրս սորա էր կին մի ի Թիկնութենէ Եղուանից Սպարամանուն, որ առնէ իւր մերձաւոր եւ սիրող եպիսկոպոս մի՝ Բակուր անուն եւ խոստանայ նմա տալ պատիւ կաթողիկոսութեան, եւ ոչ իշխեաց առաքել ի Հայս, զի մի խոտեսցին այլ առնէ ժողով ի Պարտաւ եւ տայ ձեռնարկել զնա կաթողիկոս: որ եւ անուանեցաւ

էին եւ անխառն մնացեալք ի քաղկեդոնականացն՝ զաղաղակ բարձին առ սուրբ լուսաւորչի թոռակալն առ տէր Եղիա Հայոց կաթողիկոսն:

Իսկ ապա սուրբն այն եւ անօթն Լստուծոյ շարժեալ ի հոգւոյն սրբոյ՝ արիարար ժողովեալ զուղղափառ էպիսկոպոսունս եւ զհօտս հայոց աշխարհիս՝ զնայր ի Հահաստանն Պարտաւոյ: Եւ անդ ժողով արարեալ՝ զիշխանն աղուանից աշխարհին եւ զէպիսկոպոսունս եւ զսուրբ կրօնաւորս որք ոչ էին երկրպագեալ պիղծ աղանդայն քաղկեդոնի՝ կամօք եւ հաւանութեամբ նոցին եւ իսմայէլական բռնութեամբն կալեալ զբակուր եւ զԹիկնն նորին ձեռնադրող կապեալ յիշոյ եւ ձաղանակ առնէր անդրադարձ հետեանօք ընդ շահաստանն Պարտաւոյ: Եւ ինքն ձեռնադրէր նոցա հայրապետ եւ առնոյր զիր նըրդովից՝ մի եւս շեղիլ՝ ի սրբոյն զրիգորէ եւ մի զոք ընդունիլ կաթողիկոս որ յէպիսկոպոսաց լինէր ձեռնադրած, բայց միայն որ ի սուրբ լուսաւորչի աթոռակալէն ձեռնադրէր: Եւ ինքն դառնայր յաշխարհս իւրս:

Ներսէս եւ ունէր ի ծածուկ զքաղկեդոնին: Սահակն որոյ երթեալ Եղիայի կաթողիկոսի յԵղուանս արքունի հրամանաւ, եւ կալեալ զԹիկնն եւ զՖակուրն՝ մերկացուցանէ եւ կապէ ընդ միմեանս եւ հեծուցեալ յէշ՝ շրջեցուցանէ ընդ փողոցս Պարտաւոյ. վասն որոյ անստաղ լեալ Բակուր աւուրս ութ մեռանի:

Իսկ կաթողիկոսն Եղիա ձեռնադրէ նոցա արքեպիսկոպոս եւ առնու երդումն եւ դաշինս եւ ձեռնարկ զրոյ մեծամեծ նզովիւք յիշխանաց եւ յէպիսկոպոսաց եւ ի զլիաւոր վանականաց եւ յաւազ տանուտերաց աշխարհին Եղուանից, զի մի այլ եւս հետեսցին եւ յետս կացցեն յաթոռակալաց սրբոյն զրիգորի եւ ինքն զնաց յաշխարհս Հայոց:

Եւ ի՞նչ.

Եւ շուրջաւորէ.

46. Բն. զաջաբարիա: 47. Բն. թէ: 48. Բն. հրակիզեաց: 49. Բն. զաջաբարիայն: 20. Բն. փոխածն: 21. Բն. Սպարամա: 22. Բն. ստիպելով: 23. Բն. քանդեաց: 24. Բն. եկեղեցեացն: 25. Ն. հալածեալ տարաբնակ արար: Բ. պակասի հալածականս: 26. Բն. Մեծկոնէից: 27. Բն. զեղիա: 28. Բն. ի նմանէ: 29. Բն. հոշոյ: 30. Բն. իւր: 31. Բն. ազատովքն: 32. Բն. զումարեալ: